


**ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Հաստատում եմ՝



**Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի**

Հեղինակ՝ Զախարյան Ռ. Վ.

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Գենոսիդական իրավական ոլորտում

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

**Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական
ուսումնասիրություններ**

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն.

Քրեագիտությունը հանցավոր գործունեության օրինաչափությունների գիտական ուսումնասիրությունն է, հանցագործությունների հայտնաբերման, հետաքննման և կանխարգելման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց պատշաճ օգտագործմանն ուղղված հարակից գործիքներ և մեթոդներ ստեղծելու համար իրավունքի դատավարական և բովանդակային կանոնների ստեղծումը:

Ի սկզբանե քրեագիտությունը ստեղծվեց հանցագործությունների կանխարգելման նպատակով և հիմնականում էմպիրիկ բնույթ էր կրում: Իսկ երբ հարցը վերաբերվում է հանցագործությունների հետաքննությանը, ապա դրա ձևավորման առաջին փուլերում քրեագիտությունը սահմանափակվում էր միայն դետեկտիվների, իսկ որոշ դեպքերում՝ նաև հանցագործների փորձով և գիտելիքներով: Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում զարգացումները և փոփոխությունները բերեցին նաև հանցագործությունների թվի մեծացմանը և հակաօրինական գործողությունների և մեթոդների զարգացմանը: Դա նշանակում էր, որ դրանց հայտնաբերումը պահանջում էր հանցագործության վայրում հայտնաբերված իրեղեն ապացույցների հետազոտության նպատակով քրեագիտության մեթոդների արդիականացում՝ տեխնոլոգիական զարգացումների և բնական գիտությունների գիտելիքների ընդգրկմամբ:

Հաշվի առնելով, որ հանցագործության վայրում մարդուց թողնված ցանկացած հետք պարունակում է գենետիկական ինֆորմացիա, որը կարող է օգտագործվել հանցագործությունների բացահայտման նպատակով, ժամանակակից քրեագիտությունում գենետիկական փորձաքննությունները ծանրակշիռ տեղ ունեն որպես բացահայտման գործիք: Ուստի, գենետիկական փորձաքննության արդյունքները հաճախ հանդիսանում են ճակատագրական, և դրանց ոչ ճիշտ մեկնաբանումը հանգեցնում է անմեղների դատապարտմանը և մեղավորների ազատության մեջ գտնվելուն:

Այլ իրավիճակ է ստեղծվում, երբ անձի գենետիկական հիմքերը ուղղակիորեն ազդում են նրա վարքագծի վրա: Կամ իրավիճակի բերումով իրեղեն ապացույցի վրա գտնվող գենետիկական պրոֆիլը համընկնում է այլ անձի գենետիկական պրոֆիլի հետ, ով կարող է կապ չունենալ հանցագործության հետ:

Այս ոլորտի գիտելիքների բացակայությունը կամ թերի լինելը հանգեցնում է հանցագործությունների ոչ ճիշտ բացահայտմանը և սխալ դատավճիռների կայացմանը: Իսկ դատավճիռների կայացումից հետո գրեթե անհնար է դառնում գործի վերաբացումը իրեղեն ապացույցների անհասանելիության պատճառով, ինչը իրենից ներկայացնում է ևս մի արգելք արդարության վերահաստատման համար, քանի որ չկան իրեղեն ապացույցներ կրկնակի փորձաքննությունների նշանակման համար: Մա դիտարկվում է որպես մասնագիտական թերություն և պետության կողմից կադրային ոչ ճիշտ վարած քաղաքականություն:

Եվ վերջապես, այս դասընթացի միջոցով ուսանողը կբացահայտի անհատի գենոմի կարգավիճակը քրեական օրենսդրության համատեքստում, ինչպես է անձի ԴՆԹ-ն հետազոտվում և մշակվում քրեական հետաքննությունում, և որ հանգամանքներում է անձի գենոմը պաշտպանված կառավարության կողմից քրեական օրենսդրության համատեքստում: Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դասընթացին վերաբերող պարտադիր և լրացուցիչ գրականությունը:

2. Դասընթացի նպատակը և խնդիրը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնելու գենետիկայի հիմունքներին և նրանց համար բացահայտել գենետիկայի և իրավագիտական ոլորտի միջև եղած կապը, ինչպես նաև գենետիկայի ներկայիս ազդեցությունը իրավագիտական և քրեագիտական ոլորտում: Դասընթացի խնդիրն է ուսանողներին՝

- ծանոթացնել գենետիկական փորձաքննությունների համար պիտանի իրեղեն ապացույցների տեսակներին, հանցագործության վայրից դրանց ճիշտ նմուշառման, տեսակավորման, փաթեթավորման, տեղափոխման հարցերին,

ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

- նպաստել ուսանողների մոտ գենետիկական փորձաքննության եզրակացության ճիշտ մեկնաբանմանը, տուժողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը,
- ծանոթացնել «անորոշության» վիճակին քրեական դատավարությունում,
- ծանոթացնել ԴՆԹ-ի ապացուցողական նշանակությանը, նույնականացման դեպքում «գործնականորեն հաստատվում է» և «չի բացառվում» ձևակերպումների նշանակությանը,
- ծանոթացնել ոլորտի նորագույն լուծումներին՝ ի դեմս գենետիկական ֆենոտիպավորման, երբ գենետիկական հետազոտությամբ կարելի է որոշել կասկածյալի արտաքին տվյալները, ինչպիսիք են ռասսայական պատկանելիությունը, մազերի, մաշկի, աչքերի գույնը և այլն,
- ծանոթացնել ԴՆԹ-փորձաքննությունների վերաբերյալ առկա ուղեցույցներին:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է**.

Իմաման՝

- թե ինչ է իրենից ներկայացնում գենետիկական փորձաքննությունը, ինչ էտապներից է կազմված և ինչպիսի իրեղեն ապացույցներ են անհրաժեշտ;
- ԴՆԹ փորձաքննության ապացուցողական նշանակությունը որպես արդարադատության հաստատման գործիք;
- քրեական դատավարությունում փորձագետի ունեցած ծանրակշիռ դերի մասին:

Կարողանան՝

- տարբերել հիմնավորող եզրակացությունը այլ տիպի դատաբժշկական եզրակացություններից:

Ունակ կլինեն՝

- գնահատել փորձաքննության արժեքները և կգիտակցի, որ հանցագործության հաստատման հավանականությունը կախված է իրեղեն ապացույցի ապացուցողական արժեքից և առկա տեղեկատվությունից:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	72		72				
1.1. Լսարանային պարապմունքներ:	18		18				
1.1.1. Դասախոսություններ	10		10				
1.1.2. Սեմինարներ	4		4				
1.1.3. Լաբորատոր աշխատանքներ	4		4				
1.2. Ինքնուրույն աշխատանք	54		54				
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգաբլթ)	ստուգաբլթ		ստուգաբլթ				

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Լաբոր. (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Բաժին 1. Գենոմիկայի մարտահրավերը: Ինչպես է գիտությունը դիմում	34	4	2	2	26
Թեմա 1.1. Գենոմի կառուցվածքը, «ԴՆԹ»-ն որպես հանցագործությունների բացահայտման իրեղեն ապացույց	16	2	1	1	12
Թեմա 1.2. «Անորոշությունը» փորձաքննության ոլորտում	18	2	1	1	14
Բաժին 2. Գենոմիկական և քրեական դատավարությունը	38	6	2	2	28

ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

Թեմա 2.1. Անհատների գենետիկական պրոֆիլները քրեական իրավունքի համատեքստում	18	2	1	1	14
Թեմա 2.2. Դատական գենոմիկա	20	4	1	1	14
Ընդամենը	72	10	4	4	54

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Բաժին 1. Գենոմիկայի մարտահրավերը: Ինչպես է գիտությունը դիմում արդարադատությանը

Թեմա 1.1. Գենոմի կառուցվածքը, «ԴՆԹ»-նորպես հանցագործությունների բացահայտման իրեղեն ապացույց

Գենոմիկայի և իրավագիտության շփման եզրերը: Գենոմի կառուցվածքը և ֆունկցիան, փորձաքննություններում հաճախակի կիրառվող մասնագիտական տերմինները:

Գենոմիկայում կիրառվող միջազգային ստանդարտ հանդիսացող տեխնոլոգիական լուծումները, որոնք նպաստում են արժանահավատ և հավաստի արդյունքների ստացմանը:

Գենոմիկան և քրեական իրավունքը: Ինչպես են ներկայումս քրեական արդարադատության համակարգում գործում գենետիկական ապացույցները և ինչպես կարող են դրանք օգնել կամ վնասել քրեական դատավարությանը: Ինչ դեպքերում կարող է քրեական օրենսդրությունը ընդունել կամ չընդունել գենոմիկան որպես պաշտպանություն միջոց, վերանայել քրեական օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխությունների տեսակները՝ գենետիկական ապացույցները հաշվի առնելու համար, և արդյոք այդ քրեական օրենսդրության փոփոխությունները, որոնք ընդգրկում են գենետիկական ապացույցները, կարող են ազդել քրեական օրենսդրության վրա, թե ոչ:

Թեմա 1.2. «Անորոշությունը» փորձաքննության ոլորտում

Վիճակագրության նշանակությունը օրենսդրական դաշտում:
Հավանականություններ: Անորոշության դեպքում ինչն է հանդիսանում ստանդարտ: Առարկայական հավանականություններ:

Գենետիկական փոփոխականություն: Պոպուլյացիաներ, հիպոթեզների ստեղծում, Տուժողը որպես դատավարության մասնակից:

Մեղավորության հավանականությունը գենետիկական պրոֆիլների համընկման դեպքում: Հիմնավորում: Ճիշտ հիպոթեզների առաջադրում: Կենսաբանական նյութի հնարավոր տեղափոխման հնարավորություն:

Բաժին 2. Գենոմիկան և քրեական դատավարությունը

Թեմա 2.1. Անհատների գենետիկական պրոֆիլները քրեական իրավունքի համատեքստում

Գենետիկական որոնողական համակարգեր: CODIS STR համակարգ, ԴՆԹ դատաբազաներ: Առկա օրենսդրական դաշտը:

Գաղտնիության ապահովում: ԴՆԹ-ի հետազոտումը և արդյունքների մշակումը քրեական հետաքննության ընթացքում, կառավարության կողմից անհատների գենոմների պաշտպանվածությունը քրեական օրենսդրության համատեքստում:

Փորձագիտական եզրակացության կազմելու սկզբունքները: ENFSI (European Network of Forensic Science Institutions) ուղեցույցները գնահատող եզրակացություն կազմելու համար:

Թեմա 2.2. Դատական գենոմիկա

Գենետիկական ծագումնաբանություն: Գենետիկական մարկերների կիրառմամբ իրեղեն ապացույցի սեփականատիրոջ ծագումնաբանության բացահայտման նպատակով: Մեթոդական մոտեցումներ: Դեպքերի քննարկում:

Գենետիկական ֆենոտիպավորում: Գենետիկական մարկերների կիրառմամբ իրեղեն ապացույցի սեփականատիրոջ արտաքին հատկանիշների (մաշկի, մազերի աչքերի գույն) բացահայտման նպատակով: Մեթոդական մոտեցումներ: Դեպքերի քննարկում:

4. Գրականության ցանկ (պարտադիր և լրացուցիչ)

Պարտադիր գրականություն

1. Colin G.G. Aitken, Franco Taroni. Statistics and the Evaluation of Evidence for Forensic Scientists, Second Edition, 2004
2. C. G. G. Aitken, Paul Roberts, Graham Jackson. Fundamentals of Probability and Statistical Evidence in Criminal Proceedings: Guidance for Judges, Lawyers, Forensic Scientists and Expert Witnesses, Royal Statistical Society, 2010
3. Puch-Solis, Roberto; Roberts, Paul; Pope, Susan; Aitken, C. Assessing the probative value of DNA evidence: guidance for judges, lawyers, forensic scientists and expert witnesses, 2013
4. Paul Robertson, Colin Aitken. The Logic of Forensic Proof: Inferential Reasoning in Criminal Evidence and Forensic Science
5. Graham Jackson, C. G. G. Aitken, Paul Roberts. Case Assessment and Interpretation of Expert Evidence: Guidance for Judges, Lawyers, Forensic Scientists and Expert Witnesses. Royal Statistical Society, 2013

Լրացուցիչ գրականություն

1. <https://innocenceproject.org/cases/clemente-aguirre-jarquin/>
2. <https://innocenceproject.org/cases/marvin-anderson/>
3. <https://innocenceproject.org/cases/steven-avery/>
4. <https://www.swgdam.org/publications>
5. <https://www.nolo.com/legal-encyclopedia/dna-evidence-its-genes-30060.html>
6. <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3561883/>
7. <https://pravo.ru/process/view/145542/>
8. <https://ria.ru/20190207/1550431030.html>

Իրավական փաստաթղթեր

1. ՄԻԵԴ-ի դատական պրակտիկա

5.Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված հարցերի և խնդիրների վերաբերյալ: Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, բարեկիրթ վերաբերմունք խմբի անդամների հետ:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում. Գնահատման չափանիշ՝ պլանի առկայություն, օգտագործված գրականության ցանկ, հղումների ճշգրտությունը, պատճառաբանվածություն.

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6.Պրակտիկ բլոկ

Մեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը - բանավոր հարցում:

Բաժին 1. Գենոմիկայի մարտահրավերը: Ինչպես է գիտությունը դիմում արդարադատությանը

Հարցեր քննարկման համար:

1. Գենոմիկայի և իրավագիտության շփման եզրերը
2. Գենոմ, փորձաքննություններում հաճախակի կիրառվող մասնագիտական տերմինները և միջազգային ստանդարտ հանդիսացող տեխնոլոգիական լուծումները

3. Գենոմիկան և քրեական իրավունքը:
4. «Անորոշությունը» փորձաքննության ոլորտում, վիճակագրության նշանակությունը օրենսդրական դաշտում:
5. Հավանականություններ: Անորոշության դեպքում ինչն է հանդիսանում ստանդարտ: Առարկայական հավանականություններ:
6. Գենետիկական փոփոխականություն: Պոպուլյացիաներ, հիպոթեզների ստեղծում:
7. Մեղավորության հավանականությունը գենետիկական պրոֆիլների համընկման դեպքում: Հիմնավորում: Ճիշտ հիպոթեզների առաջադրում: Կենսաբանական նյութի հնարավոր տեղափոխման հնարավորություն:

Բաժին 2. Գենոմիկան և քրեական դատավարությունը

Հարցեր քննարկման համար:

1. Անհատների գենետիկական պրոֆիլները քրեական իրավունքի համատեքստում
2. Գենետիկական որոնողական համակարգեր
3. Անհատների գենոմների պաշտպանվածությունը քրեական օրենսդրության համատեքստում և գաղտնիության ապահովում:
4. Փորձագիտական եզրակացության կազմելու սկզբունքները: ENFSI (European Network of Forensic Science Institutions) ուղեցույցները գնահատող եզրակացություն կազմելու համար:
5. Գենետիկական ծագումնաբանություն:
6. Գենետիկական ֆենոտիպավորում:

Մագիստրոսական թեզի թեմաների հնարավորցանկ:

1. ԴՆԹ փորձաքննությունները քրեական հանցաքործությունների բացահայտման միջոց:
2. ԴՆԹ-փորձաքննությունները որպես գործերի վերաբացման և արդարադատության հասնելու հիմնական գործիք:

3. Անմեղության ծրագիրը և գենովիկան տուժողի իրավունքների պաշտպանության համատեքստում:

1. Մեթոդական բով

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը:

- Ուսուցման մեթոդները դրանք դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներեն ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:
- Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառումեն դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:
- Դասավանդման մեթոդներն այն մեթոդներեն, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռքենբերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտվածեն արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:
- Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,

ԲՄԿ ՊՈԻՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- ուսանողների և դասախոսների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,
- համապատասխան են նյութատեխնիկական բազայի հնարավորություններին,
- դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ումասնա կցության ապահովումը ուսուցման գործընթացում: